«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ - ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ - ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՀԵՏԱՋՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2021

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) հետազոտական գործունեության ողջ գործընթացը կարգավորվում է Քոլեջի գործող ՌԶԾ-ով և բոլոր մասնագիտական և տեսական ամբիոններում գործող հնգամյա աշխատանքային պլանի համապատասխան:

Քոլեջում հետազոտության ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնությունները որոշելիս առաջնորդվում է հանրության, սոցիալական, տնտեսական, առողջապահական ոլորտներում առկա հիմնահարցերին լուծումներ տալով:

Ուղղորդվելով նման սկզբունքով, Քոլեջը, ելնելով իր նյութական, տեխնիկական և մարդկային ներուժի հնարավորություններից զբաղվում է հետևյալ երկարաժամկետ հետազոտական ուղղություններով.

1. Սոցիալ տնտեսական և բժշկակենսաբանական հիմնահարցեր:
2. Ավանդական և ժամանակակից դեղաբանության հիմնահարցեր:
3. Մանկաբարձական և քույրական գործունեության ժամանակակից հիմնահարցեր:

Քոլեջի ուսումնական ստորաբաժանումների (ամբիոնների) դասախոսական կազմի յուրաքանչյուր անդամ հիմք ընդունելով այս ուղղությունները, կարող է ընտրել և իրականացնել համապատասխան հետազոտական թեմա՝ ելնելով Քոլեջի առկա խնդիրներից, իր մասնագիտական առանձնահատկություններից, կողմնորոշումից, հետաքրքրություններից և հավակնություններից:

Բացի այդ, Քոլեջի հետազոտություններ կատարող աշխատակիցները լայն հնարավորություն ունեն ուսումնասիրել ատամնատեխնիկական, դեղագործական և մանկաբարձական գործունեության արդիական այլ խնդիրներ, որոնք չեն բխում Քոլեջի կողմից որդեգրված վերոհիշյալ երեք երկարաժամկետ ռազմավարական նշանակություն ունեցող հետազոտական ուղղություններից:

Հետազոտական աշխատանքները կարող են լինել տեսական, մեթոդաբանական, պատմագիտական, վերլուծական կամ կիրառական բնույթի:

Հետազոտական աշխատանքների թեմաները կարող են ունենալ անհատական, ամբիոնային, միջամբիոնային և միջքոլեջային բնույթ:

Հետազոտական թեմաների ընտրության հարցը քննարկվում և հաստատվում է Քոլեջի Մանկավարժական խորհրդի նիստում:

Ուսանողների կողմից կազմակերպվող հետազոտական (կուրսային, դիպլոմային և ավարտական) աշխատանքները ուսումնական, գիտական և հետազոտական բնույթի միջոցառումների ամբողջականություն է: Ճիշտ և նպատակային կազմակերպված հետազոտական աշխատանքները կարող են ապահովել ուսանողների մոտ հետազոտական հմտությունների ձեռքբերմանը:

Ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու քաղաքակա-նության նպատակներն են.

1. Ստեղծել ամուր հիմքեր Քոլեջի կրթական, գիտական և հետազոտական գործունեության փոխկապակցումը ինտեգրելու համար:
2. Ուսանողների մոտ ինքնուրույն ստեղծագործական, հետազոտական, վերլուծական և նորարարական ունակությունների ձևավորում:
3. Ուսանողների տեսական և գործնական գիտելիքների ամրապնդում հետազոտական ոլորտում:

Քաղաքականության խնդիրներն են՝

1. Հետազոտական և կրթական գործունեության միջև արդյունավետ, կայուն և տրամաբանական փոխկապակցվածության ձևավորումը, դասախոսական և ուսանողական համակազմի ներգրավումը հետազոտական և գիտամեթոդական աշխատանքներում:
2. Երիտասարդ դասախոսների վերապատրաստումների իրականացումը, հիմքում դնելով հետազոտական աշխատանքների կազմակերպումը և կատարումը:
3. Մասնագիտական ամբիոններում հետազոտական աշխատանքների խրախուսումը:
4. Տեղական և միջազգային ծրագրերի շրջանակներում գիտական և հետազոտական նախագծերի իրականացումը, ակտիվ ներգրավելով դրանց մեջ ուսանողներին և երիտասարդ դասախոսներին:
5. Հետազոտական աշխատանքների իրականացման ոլորտում ընդլայնել միջազգային համագործակցության շրջանակը:

Սույն քաղաքականությունը կիրառվում է Քոլեջի հետազոտական և կրթական ոլորտների վրա և ուղղված է դրանց փոխկապակցման գործընթացի իրականացմանը:

Կրթական և հետազոտական գործունեության փոխկապակցվածությունը իր մեջ ներառում է գործընթացների իրականացման համալիր, այդ թվում՝

- ուսումնական գործընթացի հետազոտական բաղադրիչի մեթոդական ապահովվածություն, օգտագործելով ամբիոնների փորձառու դասախոսների մասնագիտական կարողությունները,
- մասնագիտական և հարակից ամբիոնական հենքի վրա հետազոտական թեմաների մշակում, ուսանողների ակտիվ ուսումնահետազոտական աշխատանքների տարատեսակ ձևերի կազմակերպում և անցկացում (դիպլոմային և կուրսային աշխատանքներ, նախագծեր),
- ուսումնաարտադարական և նախաավարտական պրակտիկաների ժամանակի արդյունավետ օգտագործում,
- Քոլեջում ուսանողական գիտական խմբակների ձևավորում,
- դասախոսական կազմի միջոցով խրախուսել ուսանողների ներգրավումը ամբիոնական հետազոտական աշխատանքներում,
- ուսանողների կողմից վերլուծական և հետազոտական աշխատանքների (հոդվածներ, զեկույցներ և այլն) պատրաստում, զեկուցում տարբեր կարգի կոնֆերանսներին,
- ուսումնական և հետազոտական գործունեության միասնական տեղեկատվական միջավայրի ձևավորում,
- էլեկտրոնային ռեսուրսների զարգացման հենքի վրա, ուսանողներին տեղեկատվա-կրթական պորտալներից, Քոլեջի կայքից, այլ էլեկտրոնային համակարգերից օգտվելու հնարավորության ընձեռնում:

Պատասխանատվություն

Քոլեջը պարտավոր է ակտիվ ներգրավել ուսումնառողներին և դասախոսական կազմին կրթական և հետազոտական գործընթացներ և երաշխավորել, որ տվյալ գործընթացների փոխկապակցված են և իրականացվում են իրար համահունչ:

Քաղաքականության վերանայում

Սույն քաղաքականությունը վերանայվում և լրացումներ է կատարվում Քոլեջի Տնօրինական խորհրդի կողմից: